

ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՅԱՆ ԲԵՐԴՈՒՄ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԸՆԹԵՐՑԱԾ ԴՐՔԵՐԻՑ ՄԵԿԸ

Պ. 2. ՀԱՎՈՐՑԱՆ

Պետրոպավլովյան բերդում, բանտարկության ժամանակ, ինչպես, հայտնի է, Միքայել Նալբանդյանը շթուլացող հետաքրքրությամբ հետևում էր հայոց գրական-դիտական ու հանրային կյանքի նորություններին, շարունակում՝ իր հայագիտական պարապմունքները, եղբոր միջոցով, 1863 թ, հունվարի 27-ից սկսած՝ պարբերաբար դրքեր ստանում, որոնք այնուհետև ուշադրությամբ կարդում էր, վերլուծում կամ դատափետում, ապա վերադարձնում ու նորերը պահանջում, հրահանգում երբեմն՝ գնել այս կամ այն գիրքը, անդամ՝ կազմել տալ, երբեմն էլ՝ փոխարինաբար վերցնել որևէ ծանոթից կամ հին ընկերոջից:

Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության տարեգրությունը» (Երևան, 1954) աշխատության մեջ արձանագրված են այդօրինակ շատ դեպքեր: Օրինակ՝ 1864 թ. հունվարի 15-ին Մ. Նալբանդյանը եղբոր միջոցով ստացել է գրքեր (ո՞ւմ են պատկանել այդ գրքերը, չի ասված), իսկ մարտի 11-ին ետ է ուղարկել Քերովբե Պատկանյանի գրքերը. «Քերովբե գրքերը ուղարկեցի» (տես էջ 263 և 268)¹:

Թե՛ն երբ էր Մ. Նալբանդյանն ստացել հատկապես Քերովբեին պատկանած գրքերը, հունվարի 15-ին, թե՛ փոքր-ինչ ավելի վաղ կամ ուշ, ասենք՝ վերադարձնելուց մեկ կամ երկու շաբաթ առաջ, գուցե և 1863 թ. վերջերին, դժվար է որոշակի ասել, քանի որ նրա «Բերդի հիշատակարանում» ու նույն շրջանին վերաբերող այլ թղթերում համապատասխան նշումներ չկան: Չունենք հաստատ տվյալներ նաև այն մասին, թե՛ ստացած կամ վերադարձրած գրքերը քանի՞ հատ են եղել և ո՞ւմ հեղինակությունը: Բայց միայն այն, որ այդ գրքերը կամ գրքերից մեկ-երկուսը պատկանել են հայագետ Ք. Պատկանյանին, բավականաչափ զորավոր կուլան է, գեթ մասամբ լուծելու հարցը, որ ամենևին էլ անտեսման արժանի չէ:

Նալբանդյանի կենսագրությունն այսպիսի առեղծվածներ շատ ունի, և նրա կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրողները առաջիկայում դեռ շատ պիտի գլուխ ջարդեն դրանց վրա, որպեսզի կարողանան ստեղծել մեծ գրողի ու մտածողի գիտական կենսագրությունը:

Մատենադարանի տպագիր հրատարակություններն աչքի անցկացնելիս, մեր ուշադրությունը գրավեց երբեմն Ք. Պատկանյանի անձնական գրադարանին վերաբերող և այժմ Մաշտոցյան մատենադարանի սեփականությունը կազմող մի գիրք, որի կազմի վրա զրոշմված են Կ. Ք. լատիներեն անվանատառերը: Վերջիններն էլ ահա մատնեցին գրքի առաջին տիրոջը՝ Քերովբե Պատկանյանին: Ի դեպ, հիշյալ հաստատության մեջ է պահվում նաև Ք. Պատկանյանի գրադարանի մեծ մասը, միայն թե՛ ոչ առանձին, ինչպես պետք էր սպասել, այլ մնացած գրքերի հետ խառը:

¹ «Տարեգրության» մեջ նշված է, որ գրքեր է ստացել նաև 1864 թ. փետրվարի 13-ին ու ցույց է տրված աղբյուր՝ Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. IV, էջ 292, ուր սակայն համապատասխան տվյալը բացակայում է: Գուցե վրիպակ է:

Մեր ուշադրությունը դրաված գրքի խորագիրն է.

«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, Տպարան Լաղարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց, 1861»:

Մատենադարանի գրապահոցում հիշյալ հատորը ներկայումս կրում է 4351 թվահամարը: Միջանկյալ նկատենք, որ իր՝ Մ. Նալբանդյանի անձնական գրադարանում ևս պատմագրքի այս հրատարակությունը կա: Պիտի կարծել՝ սեփական օրինակը նա գնել է տվել ժամանակ անց, բոլոր դեպքերում 1864 թ. մարտի 11-ից հետո, որովհետև երբ լոյս տեսավ այդ գիրքը (1861 թ.), Նալբանդյանը արտասահմանում էր (մեկնել էր 1860 թ. հունիսի 27-ին), իսկ վերադառնալուց հետո (Պետերբուրգ ժամանեց 1863 թ. մայիսի 25-ին կամ 26-ին) Մոսկվայում քիչ մնաց, շուտով մեկնեց Նոր Նախիջևան, ուր և բանտարկվեց (հուլիսի 3) ու փութով փոխադրվեց Պետրոպոլսկի ամրոց: Վերջապես՝ հայտնի է, որ Ք. Պատկանյանից այլ անգամներ նա գրքեր չի ստացել, իսկ ստացածներից մեկը Ստեփաննոս Օրբելյանի պատմագրքի այս հրատարակությունն է եղել:

Քերովբեին պատկանող օրինակից իրեն անհրաժեշտ նյութերը քաղելուց, իր անձնական հարցասիրությունը բավարարելուց հետո և գիրքը տիրոջը վերադարձնելուց առաջ, նրա վերջում, կազմի վրա (ներսից) Մ. Նալբանդյանը սեփական ձեռքով արել է հետևյալ մատիտագիր նշումը.

«Ամբողջ գլ. ԻԶ գրեալ է ընդ ազդեցութեամբ վարդապետութեան եկեղեց-տյն Հոռվմայ և չէ համաձայն մեքումս: Մ. Ն.»:

Հիշյալ ԻԶ գլխի խորագիրն է «Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ ո՞րք են և ո՞րպէս վարին» (էջ 78—81), որ Ստեփաննոս Օրբելյանի Պատմության Փարիզի հրատարակության մեջ (Կ. Վ. Շահնազարյանի, 1859, էջ 149—184) արդեն դրված է Ի՛է թվահամարի տակ:

Թվում է, թե Ստեփաննոս Օրբելյանի պատմագիրքը Նալբանդյանին անհրաժեշտ է եղել, որպեսզի Ղազար Փարպեցու Թղթի իր ծրագրած թարգմանությանը կցվելիք ծանոթագրությունների համար անհրաժեշտ ատաղձներ քաղի, որպիսիք սակայն նա չի՝ կարողացել գտնել կամ չի՝ վերցրել հիշյալ հատորից: Չմոռանանք, որ Նալբանդյանը գիրքը վերադարձրել է հենց այն օրերին, երբ գլխովին նվիրվել էր Թղթի թարգմանությանն ու ծանոթագրմանը: Վերջինների մեջ, հիրավի, շոշափվում են դավանաբանական խնդիրներ, բայց Օրբելյանի պատմագրքին արված հղումներ չկան:

Պարունակում է իսկապես այդ գլուխը հայոց եկեղեցու վարդապետության համեմատությամբ խոտոր տեսակետներ, այլ խնդիր է և դուրս ներկա հաղորդման նպատակներից: Նշենք միայն, որ Օրբելյանի պատմագրքի՝ Նալբանդյանի անձնական գրադարանում պահվող օրինակի տվյալ գլուխն ամփոփող մասում ևս, 78/79 երեսների արանքում, դրված է կերպասյա էջանիշ, թերևս վերստին քննության նյութ դարձնելու դիտավորությամբ:

Սույն հաղորդումն ավարտելուց առաջ կցանկանայինք, որ Նալբանդյանագետներն ուշադրություն դարձնեն այս իրողության վրա, իբրև մի փոքրիկ, բայց անհայտ օղակ մեծ գրողի ու մտածողի կենսագրության հյուսվածքի մեջ, առաջիկայում նմանօրինակ նյութերին պատշաճ ուշադրություն դարձնելու համար: